

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ



Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը, ավազանի անունով Ավետիս, ծնվել է 1918 թվականի հունվարի 1-ին Ուրֆայում, արհեստավորի ընտանիքում։ Հայրը՝ Կարապետ, մայրը՝ Սիրանուշ, գոնիա-ազգարայցի։

1920 թվականին, Ուրֆայի հերոսամարտից հետո, գաղթական՝ Հալեպում, ուր հաճախում է Հայկազյան ազգային վարժարանը և 1932 թվականին շրջանավարտ է լինում Կիլիկյան վարժարանից։

Նույն տարին ընդունվում է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարանը, որի դասընթացը հաջողությամբ ավարտելով 1936 թվականին, սարկավագ է ձեռնադրվում հոգելույս Տ. Թորգոմ պատրիարքից և 1939 թվականին՝ կուսակրոն քահանա, հոգելույս Տ. Մեսրոպ պատրիարքից։

Այնուհետև երիտասարդ հոգևորականի առաջ Ս. Աթոռում բացվում է գործունեության լայն ասպարեզ. տպարանի տեսուչ 1939—1941 թվականներին, Հայֆայի հայոց հոգևոր հովիվ 1941—1945 թվականներին, «Սիոն» ամսագրի խմբագիր 1945—1951 թվականներին, Ս. Աթոռի մատակարար 1951—1956 թվականներին, Տնօրեն ժողովի անդամ և ատենապետ։ 1960—1964 թվականներին ժառանգավորաց վարժարանի տեսուչ, 1964—1965 թվականներին՝ Ս. Աթոռի նվիրակ և այժմ հայրապետական պատվիրակի փոխանորդ Մարսելի թեմի։

1965 թվականի նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց Հայրապետի կողմից։

Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը պատրաստված և հավատավոր հոգևորական է։ Սրբազանը գտնվում է իր ուժերի ծաղկման և հասունության շրջանում։

Ազգը և Եկեղեցին նրանից սպասում են նորանոր ծառայություններ։ Սրբազանը կարդարացնի այդ ակնկալությունները։